

Հայաստան

**Թրանսփարենսի Ինթերնեշնլ-ի կոռուպցիայի ընկալման 2007թ. համաթիվը (ԿԸՀ-ն) Հայաստանում 3.0-էր (180 երկրների ցանկում զբաղեցնելով 99-րդ տեղը)**

**Կոնվենցիաներ**

Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիա (ստորագրվել է 2004թ. փետրվարին, վավերացվել է 2005թ. հունվարին)  
Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիա (ստորագրվել է 2003թ. մայիսին, վավերացվել է 2006թ. հունվարին )  
Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիա (ստորագրվել է 2005թ. մայիսին, վավերացվել է 2007թ. մարտին )  
Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ՄԱԿ-ի կոնվենցիա

**Իրավական եւ ինստիտուցիոնալ փոփոխություններ**

Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն քաղաքականությունը հիմնված է 2003թ. նոյեմբերին կառավարության կողմից ընդունված ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության եւ դրա իրականացման միջոցառումների ծրագրի վրա: Կոռուպցիայի դեմ պայքարում էական նշանակություն ունի հիմնադիր փաստաթղթերի բարելավումը, քանի որ այդ փաստաթղթերը գլխավորապես ուղղված էին օրենսդրության ընդունմանը, այլ ոչ թե դրա արդյունավետ կիրառման մեխանիզմների ապահովմանը: Կոռուպցիայի դեմ պայքարի նպատակով ստեղծված հիմնական մարմիններն են կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը (ԿՊԽ)<sup>1</sup>՝ վարչապետի գլխավորությամբ եւ դրան առընթեր Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովը (ՄՀ), որ ստեղծվել է 2004թ. հունիսին՝ հակակոռուպցիոն քաղաքականության ամբողջական եւ արդյունավետ իրականացման նպատակով:<sup>1</sup> Սույն մարմինները գրեթե չեն գործել 2006-2007թթ., թեպետ նախատեսվում էր ԿՊԽ-ի նիստերը գումարել եռամսյակը երկու, իսկ ՄՀ-ի նիստերը՝ ամիսը մեկ անգամ՝ համապատասխանաբար: 2006թ. հունիսից մոտ 3 ամիս ՄՀ-ի նախագահի պաշտոնը թափուր էր մնացել ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի խորհրդական Բագրատ Եսայանի՝ ՀՀ կրթության եւ գիտության փոխնախարարի պաշտոնին անցնելու կապակցությամբ: «Տարածաշրջանային զարգացման կենտրոն /Թրանսփարենսի Ինթերնեշնլ - Հայաստան» հասարակական կազմակերպության նախագահ Ամալյա Կոստանյանը ս.թ. փետրվարին դուրս է եկել Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին կից Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի կազմից,<sup>2</sup> փաստելով, որ հակակոռուպցիոն ծրագիրը ձախողվել, իսկ կոռուպցիան «ավելի

1 «Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ ստեղծելու մասին» ՀՀ Նախագահի ՆՀ-100-Ն հրամանագիրը

2 ՏԶԿ/ԹԻ Հայաստան, «ՏԶԿ/ԹԻ - Հայաստանը ծանուցում է», հրաժարականի նամակ, փետրվարի 20, 2007, տես. [http://www.transparency.am/news\\_storage.php?month=2+2007](http://www.transparency.am/news_storage.php?month=2+2007)

քաղաքականացվել է եւ ավելի խոշոր ծավալների տեսք է ընդունել»:<sup>3</sup> Սույն մտահոգությունն արտահայտվել է նաեւ Համաշխարհային բանկի հրապարակած «Հակակոռուպցիան անցումային փուլում.3. ո՞վ է հաջողություն ձեռք բերել... եւ ինչո՞ւ» զեկույցում, որը մատնանշում է կաշառակերության ավելացումը որոշակի՝ այդ թվում եւ հարկային ու մաքսային ոլորտներում:<sup>4</sup> 2006թ. դեկտեմբերին կառավարությունը հաշվետվություն է ներկայացրել Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Արեւելյան Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանցին: Այն վերաբերում է Հայաստանի հակակոռուպցիոն քաղաքականությանն եւ ինստիտուտների բարելավմանն ուղղված ՏՀԶԿ-ի կողմից ներկայացված 24 փորձագիտական հանձնարարականների կատարմանը:<sup>5</sup> 2006թ. դեկտեմբերին կայացած ՏՀԶԿ մոնիտորինգին նվիրված վեցերորդ հանդիպումը թեպետ անդրադարձել է մի շարք դրական կողմերի, ներառյալ փողերի լվացման հանդեպ վերահսկողությունը եւ օրինականության բարելավումը հանրային ծառայությունում, մատնանշել է, որ խիստ սակավաթիվ են այն անձինք, հատկապես պաշտոնատարները, որ դատապարտվել են կոռուպցիայի մեջ, գույքի հայտարարագրումը պաշտոնատար անձանց կողմից ավելի մեծ թափանցիկություն է պահանջում, իրավապահ եւ ֆինանսական վերահսկողության ինստիտուտների միջեւ համագործակցությունը կարիք ունի բարելավման:<sup>6</sup>

2007 թ. ապրիլին Երեւանում բացվել է հակակոռուպցիոն հանրային ընդունարան Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպության (ԵԱԿԿ) Երեւանյան գրասենյակի աջակցությամբ: Ընդունարանը կազմող քաղաքացիական հասարակության կոալիցիայի 14 խմբեր կոռուպցիային առնչվող անվճար խորհրդատվություն են տրամադրում քաղաքացիներին իրավական, ընթացակարգային եւ գործնական խնդիրների վերաբերյալ: Նմանատիպ ընդունարաններ գործում են նաեւ Լոռու եւ Գեղարքունիքի մարզերում:

## Քաղաքական կուսակցությունների ֆինանսավորումը եւ 2007թ. մայիսին կայացած ընտրությունները

Քաղաքական գործունեության կիզակետը Հայաստանում 2007թ. մայիսի 12-ին կայացած ՀՀ Ազգային ժողովի ընտրություններն էին: Քանի որ Հայաստանը ներգրավվել է

<sup>3</sup> ArmeniaLiberty.org (Հայաստան), 17 հոկտեմբերի, 2006թ.

<http://www.armenialiberty.org/armeniareport/report/ar/2006/10/DC4AD537-D851-429F-B5F7-53C350DABDF6.asp>

<sup>4</sup> J. Anderson and C. Gray, ‘Anti-corruption in Transition 3: Who is Succeeding... and Why?’ (Washington, DC: World Bank, 2006).

<sup>5</sup> OECD ACN, ‘Istanbul Anti-corruption Action Plan for Armenia, Azerbaijan, Georgia, the Kyrgyz Republic, the Russian Federation, Tajikistan and Ukraine, Review of Legal and Institutional Framework for Fighting Corruption-Armenia: Summary Assessment and Recommendations’ (Paris: OECD ACN, 2004).

<sup>6</sup> OECD ACN, ‘Istanbul Anti-corruption Action Plan for Armenia, Azerbaijan, Georgia, the Kyrgyz Republic, the Russian Federation, Tajikistan and Ukraine- Armenia: Monitoring Report’, (Paris: OECD ACN, 2006).

Եվրոպական հարեւանության քաղաքականության (ԵՀՔ) մեջ 2004-ին՝ ազատ, արդար եւ թափանցիկ ընտրությունները էական նշանակություն ունեին հարեւան պետությունների հետ ընդհանուր արժեքների ստեղծման համար: Ավելի հզոր ժողովրդավարական գործընթացների ապահովումը նաեւ պայման է հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան հնգամյա ծրագրի շարունակության համար, որը նպատակ է հետապնդում Հայաստանում հասնել գյուղական աղքատության կրճատմանը 236 միլիոն ԱՄՆ դոլար տրամադրելու միջոցով:

2006թ. դեկտեմբերին եւ 2007թ. փետրվարին ՀՀ Ազգային ժողովի կողմից ՀՀ ընտրական օրենսգրքում կատարվեցին փոփոխություններ ու լրացումներ՝ հիմնված Եվրոպայի խորհրդի Վեներտիկի հանձնաժողովի ու ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների եւ մարդու իրավունքների գրասենյակի (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ)<sup>7</sup> կատարած հանձնարարականների վրա: Փոփոխությունների թվում են քաղաքական կուսակցությունների ցուցակով տեղերի ավելացումը մեծամասնական քվեարկության համեմատ, ընթացակարգերի ուժեղացումը՝ առաջադրելով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամներ, հանձնարարությունների բաշխման բարելավումը ընտրական հանձնաժողովներում, ընտրական հանձնաժողովների անդամների հետ կանչման չեղյալ հայտարարումը, դիտորդական ընտրական առաքելության համար բյուրոկրատական ընթացակարգի կրճատումը, վստահված անձերի դերի ուժեղացումը, տեսաձայնագրման կանոնակարգումը, քվեարկության եւ հաշվման գործընթացների բարելավումն ու Հայաստանի սահմանից դուրս ապրող հայերի քվեարկության իրավունքի վերացումը:

Կատարված փոփոխությունները բավարար օրենսդրությանն ուղղված դրական քայլ գնահատելով հանդերձ, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը եւ Վեներտիկի հանձնաժողովը իրենց ներկայացրած զեկույցում նշել են, որ օրենսդրությունում առկա սողանցքերն այնուամենայնիվ, կոռուպցիայի ավելացման տեղիք են տալիս: Որոշ տեղացի եւ միջազգային փորձագետների կարծիքով ՀՀ Ընտրական օրենսգիրքը բավարար չափով չի կարգավորում կուսակցությունների նախընտրական քարոզչության ֆինանսավորումը: Մասնավորապես, «նախընտրական քարոզչությունն» ու «քաղաքական գովազդը» միմյանցից հստակորեն չեն տարանջատվում, հնարավորություն տալով կատարել այնպիսի էական խախտումներ, որոնք դժվար է սահմանազատել:<sup>8</sup>

Իրավական բարեփոխումներն ուղեկցվել են ազատ եւ արդար ընտրությունների ապահովմանն ուղղված այլ բնույթի գործունեությամբ: Ընտրացուցակները ճշտվել են IFES-ի (Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի) օգնությամբ: International IDEA-ն (Ժողովրդավարության եւ ընտրությունների աջակցության միջազգային ինստիտուտը) դասընթացներ է կազմակերպել Ընտրական հանձնաժողովների անդամների համար: Եվրոպայի խորհուրդը, ԵԱՀԿ-ն, ՄԱԿ-ի Ձարգացման եւ Ամերիկյան

<sup>7</sup> Տես [www.venice.coe.int/site/dynamics/N\\_Country\\_ef.asp?C=42&L=E](http://www.venice.coe.int/site/dynamics/N_Country_ef.asp?C=42&L=E).

<sup>8</sup> ՏԶԿ/ԹԻ-Հայաստան, մամուլի հաղորդագրություն, մայիսի 31, 2007թ., Տես նաեւ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ միջազգային ընտրական դիտորդական առաքելություն, «Հայտարարություն նախնական արդյունքների եւ եզրակացությունների մասին», 13 մայիսի, 2007թ.

փաստաբանների ասոցիացիայի Եվրոպայի եւ Եվրասիայի ծրագրերը նպաստել են կարողության ապահովման նախագծերի իրականացմանը, որոնց թվում են ընտրական օրենսդրության վերաբերյալ ձեռնարկի իրապարակումը եւ քաղաքացիների իրավունքներին առնչվող իրազեկության բարձրացման եւ քվեարկության գործընթացի վերաբերյալ սոցիալական հոլովակների ցուցադրումը հեռուստատեսությամբ: Ընտրական գործընթացը մոնիտորինգի է ենթարկվել ավելի քան 500 երկարաժամկետ եւ կարճաժամկետ եւ 13,000 տեղացի դիտորդների կողմից:<sup>9</sup>

Չնայած առավել ժողովրդավարական գործընթացի ապահովմանն ուղղված մեծ ջանքերին, 2007թ. խորհրդարանական ընտրությունն ուղեկցվել է կոռուպցիոն երեւոյթներով, որոնք ավելի կատարելագործված բնույթ էին կրում, քան դրան նախորդող ընտրություններին: Ողջ տարվա ընթացքում անցկացված մոնիտորինգի արդյունքում բացահայտել են արտահայտման ազատության, հավաքների եւ միավորման ազատության ու մասնավորության իրավունքի ոտնահարումներ:<sup>10</sup> Արդար ընտրություններ անցկացնելու համար պատասխանատու այնպիսի կառույցներ, ինչպիսիք են ընտրական հանձնաժողովները, ոստիկանությունն ու դատախազությունը, չեն կարողացել արդյունավետ կատարել իրենց պարտականությունները: Չնայած ընտրացուցակների բարելավմանը, նախկինի պես բազմակի քվեարկության բազմաթիվ դեպքեր են արձանագրվել:<sup>11</sup> Ապացուցվել է, որ պետական մարմինների աշխատակիցներին ստիպել են քվեարկել որոշակի կուսակցությունների օգտին:<sup>12</sup>

Պետական մարմինների, զանգվածային լրատվության միջոցների եւ վարչական ռեսուրսների նկատմամբ վերահսկողությունը անարդար պայմաններ էր ստեղծել ընդդիմադիր կուսակցությունների համար: Քաղաքացիական ծառայողները պաշտոնական քարոզչությանը նախորդող շրջանում եւ քարոզչության ժամանակ ակտիվորեն քարոզում էին աշխատանքային ժամերին՝ խախտելով ՀՀ ընտրական օրենսգրքի հոդված 22-ը:<sup>13</sup> Տեղական ինքնակառավարման եւ տարածքային կառավարման մարմինների ներկայացուցիչներն ակտիվորեն միջամտում էին ընտրական գործընթացներին: Հաղորդվել է, որ պաշտոնյաների սպանությունները կամ նրանց նկատմամբ մահափորձերը, ցուցարարների եւ լրագրողների նկատմամբ բռնությունները,

9 Տես [www.elections.am/?go=aj2007&lan=e](http://www.elections.am/?go=aj2007&lan=e)

10 Երեւանի մամուլի ակումբ, Հայաստանում ժողովրդավարական բարեփոխումների մոնիտորինգ (Երեւանի մամուլի ակումբ եւ Բաց հասարակության ինստիտուտ, 2006թ)

11 Ա1+ (Հայաստան), 13 մայիսի, 2007թ.

12 «Արմենիանաու», 18 մայիսի, Տես նաեւ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի (ՀՔԱ) Վանաձորի գրասենյակ, Ձեկույց 2007թ. մայիսի 12-ի Ազգային ժողովի ընտրությունների դիտորդական առաքելության արդյունքների մասին (Վանաձոր, Հայաստան ՀՔԱ Վանաձորի գրասենյակ, 2007թ.)

13 Երեւանի մամուլի ակումբ, «Հայաստանի ՁԼՄ-ներում ՀՀ 2007թ. խորհրդարանական ընտրությունների լուսաբանման դիտարկում» (Երեւանի մամուլի ակումբ եւ Բաց հասարակության ինստիտուտ, 2007թ): Տես նաեւ ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ ընտրությունների միջազգային դիտորդական առաքելություն, 2007թ.

ընդդիմադիրների գրասենյակներում գաղտնալսումները եւ ընդդիմության առաջնորդների տների խուզարկությունները ընտրողների շրջանում վախի մթնոլորտ են ստեղծել:<sup>14</sup>

Այս ընտրությունները ցույց են տվել, որ ձայների գնման երեւոյթը Հայաստանում արմատավորվում է՝ ինստիտուցիոնալ բնույթ ստանալով: Ընտրակաշառքի դեպքեր են արձանագրվել ընտրարշավից առաջ եւ հետո՝ առաջատար քաղաքական գործիչների կամ կուսակցություններին հավատարիմ՝ այսպես կոչված բարեգործական կազմակերպությունների միջոցով անհատույց գյուղատնտեսական մթերքներ եւ հեռուստացույցներ բաժանելու, ինչպես նաեւ քաղաքացիներին իրենց քվեների դիմաց գումար վճարելու միջոցով:<sup>15</sup>

Թեպետ ընդհանուր առմամբ ընտրական հանձնաժողովների անդամների վերապատրաստման, ընտրողներին կրթելու, ընտրողների ցուցակների համակարգչային գրանցման եւ մամուլի լայնածավալ լուսաբանման հանդեպ դրական գնահատականին, ընտրությունների միջազգային դիտորդական առաքելության նախնական եւ միջանկյալ զեկույցներում որոշ հարցեր մտահոգության տեղիք են տալիս:<sup>16</sup> Որպես խորհրդարանական ընտրություններին խանգարած գործոններ, մատնանշվում է գործընթացը կանոնակարգող իրավական դաշտում բացթողումները, ՀՀԿ-ի, ՀՀԴ-ի ներկայացուցիչների եւ նախագահի կողմից նշանակված անդամների կողմից ընտրական հանձնաժողովների վերահսկողությունը, ձայների հաշվարկի ժամանակ մեքենայությունները, ինչպես նաեւ ավելի ուշ մուտքագրված եւ հայտարարված տվյալների հետ ընտրական հանձնաժողովների արձանագրությունների անհամապատասխանությունը, արդյունքների ուշ հայտարարելը: Միեւնույն անհամապատասխանությունները մատնանշվել են տեղական դիտորդների զեկույցներում:<sup>17</sup>

«ՏԶԿ/ԹԻ-Հայաստան» հասարակական կազմակերպության խորհրդարանական ընտրություններում կուսակցությունների նախընտրական քարոզչության ֆինանսավորման եւ վարչական ռեսուրսի չարաշահման մոնիտորինգի արդյունքում պարզվել է, որ երկու կուսակցություն, որ ստացել են համամասնական տեղերի մեծամասնությունը՝ Հայաստանի հանրապետական կուսակցությունը եւ Բարգավաճ Հայաստան կուսակցությունը (90-ից 41 եւ 18 տեղեր, համապատասխանաբար) գերազանցել են ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված նախընտրական քարոզչության իրականացման

14 «Գործընկերություն հանուն բաց հասարակության» նախաձեռնություն, 14 մայիսի 2007թ., [www.partnership.am/docs.php?Lang=E&ID=76](http://www.partnership.am/docs.php?Lang=E&ID=76)

15 Ընտրությունը քննն է ՀԿ-ի 2007թ. ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների դիտորդական առաքելություն (Երեւան. Ընտրությունը քննն է, 2007թ.): Տես նաեւ ՀՔԱ Վանաձորի գրասենյակ, 2007թ.

16 ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելության, Միջանկյալ զեկույց 2, 29 մարտի-17 ապրիլի 2007թ. ; Միջանկյալ զեկույց 3, 18 ապրիլի-2 մայիսի 2007թ., Հայտարարություն նախնական արդյունքների եւ եզրակացությունների վերաբերյալ, 13 մայիսի, 2007թ. եւ ետընտրական միջանկյալ զեկույց 1, 13-22 մայիսի, 2007թ.

17 «Ընտրությունը քննն է ՀԿ-ի վերջնական զեկույց» (Երեւան. Ընտրությունը քննն է, 2007թ.); ՀՔԱ Վանաձորի գրասենյակ, 2007թ. եւ Երեւանի մամուլի ակումբ 2007թ.

համար թույլատրված 60 մլն դրամը (178,000 ԱՄԴ համապատասխանաբար): Քարոզչական նյութերի և նախընտրական միջոցառումների վրա այդ կուսակցությունները, համապատասխանաբար, ծախսել են ավելի քան 79,1 մլն և 129,6 մլն դրամ:<sup>18</sup> 2007թ. հունիսին սույն տվյալները ընդդիմադիր երկու կուսակցությունների կողմից, որոնք ընտրությունների արդարությունը հարցականի տակ էին դնում, ներկայացվեցին ՀՀ Սահմանադրական դատարան: Դատարանը չընդունեց դրանք որպես խախտումների ապացույց, սակայն ընդունեց, որ որ այդ հարցում առկա են օրենսդրական թերացումներ եւ կոչ արեց հետագա բարեփոխման:<sup>19</sup>

### Հեռարձակվող լրատվամիջոցները՝ խիստ հսկողության տակ

Հայերի մեծամասնությունը տեղեկատվություն է ստանում հեռուստատեսությունից, իսկ տպագիր մամուլը նվազ կարեւոր դեր ունի:<sup>20</sup> Ուստի եւ անկախ եւ բազմակարծություն ապահովող հեռարձակվող լրատվամիջոցները վճռորոշ նշանակություն ունեն ժողովրդավարության զարգացումն ապահովելու գործում:

Չնայած Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվության ազատությունն ապահովող մի շարք օրենքների առկայությանը, այդ թվում՝ 2003թ. ընդունված Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքին եւ 2003թ. ընդունված Ձանգվածային լրատվության մասին ՀՀ օրենքին, որոշակի միտումներ, որ հիմնականում զուգակցվում են 2000թ. ընդունված Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին ՀՀ օրենքի հետ, սահմանափակում են այդ ազատությունները եւ տանում՝ դեպի կոռուպցիա:<sup>21</sup> Օրինակ, Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը, որի անդամներին նշանակում էր ՀՀ նախագահը, բնականաբար արտացոլում էր կառավարության քաղաքական օրակարգը: Մինչեւ 2007թ. նախագահն էր նշանակում նաեւ մասնավոր հեռուստառադիոընկերությունները կարգավորող մարմնի՝ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի բոլոր անդամներին, որը հիմնադրվել էր հեռարձակվող լրատվամիջոցների արդար մրցակցություն ապահովելու նպատակով:<sup>22</sup>

Հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման լիցենզավորման մրցույթը թափանցիկ չէ, քանի որ այն ենթակա է Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի հայեցողությանը եւ առաջնորդվում է ավելի շուտ քաղաքական շահերով, քան օրենքի պահանջներով: Թեպետ օրենսդրությունը թույլատրում է, որ ՀԿ փորձագետները ներգրավվեն հայտերի գնահատմանը,<sup>23</sup> Հեռուստատեսության եւ ռադիոյի

<sup>18</sup> «Արմենիանու», 25 մայիսի, 2007թ.

<sup>19</sup> ՀՀ Սահմանադրական դատարանի որոշում, ՍԴՈ – 706, 10 հուլիսի 2007թ.

<sup>20</sup> ՏԶԿ/ԹԻ Հայաստան եւ ՄԱԶԾ, «Կոռուպցիայի ընկալումը Հայաստանում 2006թ.» (Երեւան, ՏԶԿ/ԹԻ Հայաստան եւ ՄԱԶԾ)

<sup>21</sup> Երեւանի մամուլի ակումբ, «Հայաստանում ժողովրդավարական բարեփոխումների մոնիտորինգ», (Երեւանի մամուլի ակումբ եւ Բաց հասարակության ինստիտուտ, 2005թ):

<sup>22</sup> Սույն դրույթը փոփոխության է ենթարկվել 2007թ. փետրվարին

<sup>23</sup> «Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի կանոնակարգ» ՀՀ օրենք, հոդված

ազգային հանձնաժողովը մերժել է մի շարք լրատվական կազմակերպությունների՝ գործընթացին ներգրավվելուն ուղղված հայտերը: Ավելին, չնայած օրենքը չափանիշներ է սահմանում հաճախություններ հատկացնելու վերաբերյալ, դրանք հստակ չեն, եւ սուբյեկտիվ ու օրենքով չարդարացված որոշումներ են ընդունվում: Ամենավառ օրինակը արդեն իսկ կայացած եւ մեծ լսարան ունեցող «Ա1+» հեռուստաընկերությանն է վերաբերում, որը եթերազրկվելով 2002 թ., այն ժամանակից ի վեր տարբեր հաճախականությունների մրցույթների հայտ է ներկայացրել եւ ավելի քան 10 անգամ մերժվել է, իսկ առավելությունը տրվել է հաճախ նաեւ աչքի չընկած ընկերությունների:<sup>24</sup>

Բավարար չափով չի վերահսկվում օրենքների ու արտոնագրման պայմանների հետ համապատասխանության հարցը, իսկ խախտումների համար պատիժը սահմանվում է ըստ հայեցողության: Նման գործելաոճը ազդում է հեռարձակվող լրատվամիջոցների ազատ մրցակցության վրա եւ սահմանափակում՝ խոսքի ազատությունը: 2005թ. նոյեմբերի հանրաքվեով ընդունված սահմանադրության փոփոխություններով մասնակիորեն նախատեսվում էր ապահովել Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի ավելի մեծ ազատություն՝ ելնելով հեռարձակվող լրատվության միջոցներում բազմակարծության հաստատման նպատակներից:<sup>25</sup> Ակնկալվում էր, որ կառավարությունը նաեւ փոփոխության կենթարկի Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին օրենքը՝ համաձայն փոփոխված Սահմանադրության, ինչը սակայն տեղի չունեցավ: 2006թ. սեպտեմբերին կառավարությունը հապճեպ ներկայացրեց օրենքի նախագիծ, որ քննարկման չենթարկվեց ո՛չ շահագրգիռ կազմակերպությունների, ո՛չ էլ համապատասխան խորհրդարանական հանձնաժողովի կողմից: Հինգ լրագրողական հասարակական կազմակերպություններ՝ Երեւանի մամուլի ակումբը, Ինտերնյուս-Հայաստան ՀԿ-ն, Հայաստանի ժուռնալիստների միությունը, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն եւ ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը լուրջ մտահոգություն են հայտնել արտահայտման ազատության վերաբերյալ: Մասնավորապես, փոփոխությամբ նախատեսվում էր Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի շարունակական կախվածությունը նախագահից: Նախագիծը քննարկվել է 2006թ. սեպտեմբերի 27-ի ՀՀ Ազգային ժողովի արտահերթ նիստի ժամանակ եւ քվեարկության է դրվել հոկտեմբերի 3-ի հերթական նիստի ընթացքում, որը չի ընդունվել: Նախագծի մերժվելուց հետո միայն համապատասխան շահագրգիռ կողմերի հետ սկսվել են քննարկումներ ծավալվել:

Օրենքը վերջնականապես փոփոխության է ենթարկվել 2007թ. փետրվարին փոփոխված Սահմանադրությանը համապատասխան: Այն նախատեսում էր, որ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի անդամների կեսը նշանակվեն նախագահի, իսկ մյուսները՝ ընտրվեն Ազգային ժողովի կողմից: Ակնկալվում էր, որ նախագահը մի քանի տարի եւս վերահսկողություն կպահպաներ, քանի որ վեց տարի

<sup>24</sup> Երեւանի մամուլի ակումբ, 2006թ.

<sup>25</sup> Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, հոդված 83.2

կտելեր այս հիսուն-հիսուն հարաբերակցությանը հասնելու համար: Հանձնաժողովի ներկայիս անդամները կշարունակեն իրենց պաշտոններին մնալ մինչև պաշտոնավարման ժամկետի լրանալը կամ լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը:<sup>26</sup>

Հանձնաժողովի անդամներից երեքի պաշտոնավարման ժամանակը լրացել է 2007թ. մարտին, իսկ մի ամիս անց նախագահը վերանշանակել է երկու անդամների: Գրիգոր Ամալյանը՝ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի նախկին նախագահը, որի անունը կապված է Ա1+ հեռուստաընկերության հեռարձակումը բազմիցս մերժման հետ, վերանշանակվել է եւ վերընտրվել նախագահ, ապահովելով ներկայիս քաղաքականության շարունակականությունը:<sup>27</sup> Ավելի վաղ՝ 2007թ. փետրվարին Ալեքսան Հարությունյանը նախագահի կողմից վերանշանակվել էր Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի կազմում՝ անդամների կողմից վերընտրվելով նախագահ:<sup>28</sup>

Հեռարձակվող տեղական լրատվամիջոցների նկատմամբ վերահսկողությունը նշանակալի ազդեցություն ունեցավ մի քանի կուսակցությունների եւ թեկնածուների նախընտրական արշավի վրա: Մինչև պաշտոնական քարոզարշավը որոշ ընդդիմադիր կուսակցություններ գրեթե զրկված էին եթերաժամից: Թեեւ հանրային հեռուստատեսությունը եւ պետության կողմից վերահսկվող հեռարձակվող այլ լրատվամիջոցները հավասարակշռված պահվածք էին որդեգրել բուն ընտրարշավի ընթացքում, սակայն փաստացի, չի հատուցվել նախկինում հասցված վնասը:<sup>29</sup>

### Հարցման արդյունքներ

Համաձայն կոռուպցիայի ընկալման վերաբերյալ Հայաստանի ողջ տարածքում անցկացրած ՏՁԿ/ԹԻ-Հայաստան կազմակերպության 2006թ. անցկացրած հարցման արդյունքների, հարցման ենթարկվածների 74.3 տոկոսը կառավարության հակակոռուպցիոն քաղաքականությունը համարում է ոչ արդյունավետ: Ընդամենը 15.6 տոկոսն է տեղյակ ԿՊԽ-ից, իսկ 8.6 տոկոսը՝ ՄՀ-ից: Հարցվածների մեծ մասը գտնում է, որ կոռուպցիայի հիմնական պատճառները օրենքների թերի կիրառումն է (94 տոկոս), կոռուպցիայի հանդեպ հանդուրժողականությունը (87,8 տոկոս) եւ ոչ բավարար վերահսկողության ու պատժի մեխանիզմները (87,7 տոկոս): Հարցման գրեթե բոլոր մասնակիցները (93,9 տոկոս) գտնում են, որ օրենքների կիրառման ուժեղացմամբ կարելի է հասնել կոռուպցիայի նվազեցման: 91,9 տոկոսը բարձրացնում է կոռուպցիայի մեջ զբաղվողներին պատժելու խնդիրը, իսկ 91,3 տոկոսն առաջարկում է քաղաքացիների

<sup>26</sup> Երեւանի մամուլի ակումբ, 2006թ.

<sup>27</sup> Երեւանի մամուլի ակումբ, Տեղեկատվական ամսագիր, 6-12 ապրիլի, 2007թ.

<sup>28</sup> Երեւանի մամուլի ակումբ, Տեղեկատվական ամսագիր, 2-8 փետրվարի, 2007թ.

<sup>29</sup> Երեւանի մամուլի ակումբ, 2007թ. Հայաստանի ՁԼՄ-ներում ՀՀ 2007թ. խորհրդարանական ընտրությունների լուսաբանման դիտարկում



իրավունքների եւ պարտավորությունների վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացումը:<sup>30</sup>

### Սեւանա լճի մակարդակի բարձրացումը

Սեւանա լիճը քաղցրահամ ջրերի ամենամեծ ջրամբարն է Կովկասում: Այն նաեւ ջրային ու չվող թռչունների հայրենիքն է: Ջրի մակարդակը սկսել է իջնել 1930-ականներն՝ էներգիայի ստացման, ոռոգման եւ շրջապատի ճահճային տարածքի ցանաքեցման նպատակով չափից դուրս շատ ջրօգտագործման պատճառով: Ջրի մակարդակը նվազել է 19 մետրով, հանգեցնելով ջրի որակի վատթարացման եւ կենսաբազմազանության կորստին: Բազմազան միջամտություններ են կատարվել լճի ջրի մակարդակը բարձրացնելու ուղղությամբ, այդ թվում եւ գետերի ընթացքը փոխելով,<sup>31</sup> 2001թ.Սեւանա լճի մասին հատուկ օրենք եւ վերականգնման պլան ընդունելով: Վերջինս 30 տարի շարունակ նպատակ ուներ ջրի մակարդակը բարձրացնել 6 մետրով, որպեսզի էկոլոգիական հավասարակշռություն պահպանվեր եւ կանխվեր շրջակա միջավայրին հասցվող աղետը:<sup>32</sup>

Լիճը փրկելուն ուղղված ընթացիկ միջոցառումներն ուղեկցվել են ահագնացող ճնշմամբ, ելնելով անձնական շահագրգռվածությունից եւ ջանալով օգտագործել այն սեփական հաճույքի համար: Չնայած լճի ափերի զարգացման սահմանափակմանը, իրար գլխի են հավաքվել անօրինական շինությունները: Հիմնական կառուցապատողների թվում են կառավարության բարձրաստիճան պաշտոնյաներն ու քաղաքական գործիչները:<sup>33</sup> 2000թ. սկզբում, երբ տեղումների քանակն անսպասելիորեն ավելացրել է ջրի մակարդակը Սեւանա լճում վեց տարում հասնելով մինչեւ 2.44 մետրի՝ կառավարությունը սկսել է վերանայել 6-մետրի նշանակետը եւ ներկայացրել է կարծիք սեփականության վնասի փոխհատուցման վճարման վերաբերյալ:<sup>34</sup>

Սոնա Այվազյան (Տարածաշրջանային զարգացման կենտրոն/ ԹԻ Հայաստան )

### Հետազա ընթերցանություն

J. Anderson and C. Gray, ‘Anti-corruption in Transition 3: Who is Succeeding... and Why?’ (Washington, DC: World Bank, 2006).

ՏԶԿ/ԹԻ Հայաստան եւ ՄԱԶԾ, «Կոռուպցիայի ընկալումը Հայաստանում 2006թ.» (Երեւան, ՏԶԿ/ԹԻ Հայաստան եւ ՄԱԶԾ 2006թ)

<sup>30</sup> ՏԶԿ/ԹԻ- Հայաստան եւ ԱԱԶԾ

<sup>31</sup> ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողով եւ ՀՀ բնապահպանության նախարարություն, Ազգային զեկուլոց՝ Շրջակա միջավայրի վիճակը Հայաստանում 2002 թվականին (Երեւան, ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողով, 2003թ.)

<sup>32</sup> «Արմենիանաու», 15 դեկտեմբերի, 2006թ.

<sup>33</sup> Անօրինական կառուցապատողների փոխհատուցման նպատակով հետազա մանրամասների համար տես, «Արմենիանաու», 29 հունիսի, 2007թ.

<sup>34</sup> Ջրի մակարդակի ավելացման վերաբերյալ մանրամասների համար տես [www.armeniapedia.org/index.php?title=Lake\\_Sevan\\_water\\_level](http://www.armeniapedia.org/index.php?title=Lake_Sevan_water_level).

European Bank for Reconstruction and Development (EBRD) and World bank, 'Business Environment and Enterprise Performance Survey' (London: EBRD and World Bank, 1999, 2002 and 2005).

Ա. Կոստանյան եւ Վ. Հոկտանյան, «Օրինականության ազգային համակարգ. Թրանսփարենսի հնթերնեշնլ միջազգային հակակոռուպցիոն կազմակերպության ուսումնասիրության հաշվետվություն, Հայաստան 2003» (Երեւան. ՏԶԿ/ԹԻ Հայաստան, 2004թ.)

«Հակակոռուպցիոն քաղաքականությունը Հայաստանում» (Երեւան. ՏԶԿ/ԹԻ Հայաստան, 2006թ.)

ԹԻ Հայաստան. [www.transparency.am](http://www.transparency.am)